



6. ՍԻՆԱՍ ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ԳՅՈՒԼ

Թագյավոր մ' կէդի, խնտ մեկ լաւեմ' գէլին կերթան, կը պտոտեն. էդա թագյավոր լե ըսկի ավլատ ու թավլատ չուներ: Կերթան մեկ դավրեշիմ' ըռաստ կիգյան:

Դավրեշ կասա. - Թագյավոր ապրած, ես գիտեմ, դո՛ւ ինչի շուռ կիգյան՝ տղեմ' ապով շուռ կուգյաս, արի քե մի խնծոր կուտամ, կես դու կեր, կես սուլթան թ'ուտա: Աստված քե երկու տղա կուտա, մեկ տղեն լե, խավլ էրա, օր տաս ծի:

Թագյավոր խավլ էրաց, էլավ գնաց ուր տուն. ինչ որ կես ինք կերավ, կեսն էտուր սուլթանին: Ին ամիս, ին դան, ին դադըզա մնաց, թագյավորի կնիկ պարկյավ, էբեր ջուխթմ' տղա: Տղեք ջոջցան, էդան տաս տարեկան: Ավուր մեկ դավրեշն էկավ, տեսավ որ երկու տղեն հոլ կխաղին, ասաց. - Կա ու չկա, էսոնք իմ խնծորի տղեկներն են:

Կանչեց գէն երկու տղին, պստիկն չէկավ. ջոջն էբեր, ասաց. - Արի, էրթանք, քյ՛՛՛ խոր տուն տո՛ւր ծի շանց:

Տղեն ընկյավ առջև, տարավ. - Էսա իմ խոր տուն ա:

Դարվեշ մտավ ինե, տղի խոր տուն, սալամըղ կապեցին առեջ. ասաց.

- Թագյավոր ապրած կենա, դու քյ՛՛ խոսաց տե՞րն ես:

Ասաց. - Խա՛, ես իմ խոսաց տերն եմ:

Բերեց գերկու տղեն կայնեցուց դավրեշի առեջ, ասաց. - Որ մեկ կը վերուս, վերցու:

Դավրեշ ասաց. - Պստիկ կը վերուս:

Պատիկ չգնաց. քոջին ասաց. քոջ էլավ ընկյալ դավրեշի էտև, գնաց: ճամբխու կիսուն ծարվըցան. տղեն իշկեց օր սարի տկեն ծուխմ՝ կերևա, ասաց. - Դավրեշ բաբա, էրթանք էդա տեղ ջուրմ՝ խմինք, ընցինք:

- Ես չըմ գյն, - ասաց դավրեշ, - դու գնա՛ խմե՛, արե՛:

Տղեն գնաց օր ջուր խմեր. կնիկմ՝ էլավ առեջ, ասաց. - Ի՞նչ կատուտիս, անխելք տղա, էսա դավրեշի խետ, մուխաթ կեցի, քե կը սպանա, զքու ջանտակ լե խառնա էնա ջանտկներուն. ինք ջանդկե բերդ մ'ա շինե, գլխուց բատան: Քե թամբախ կուտամ, չուրի ճարի առեջ դու կընկնիս առեջ. սարին մոտըցար, կյանսես էնոր. «Դու ընկիր առեջ»: Էն օր շեմն ընցավ, դու դմշկա ինե, վերին դիեն սաթրին մի կա, կընկնի վզին, կը սպանա:

Տղեն էլավ գնաց, կնիկ իմալ ասեր էր, էնպես էղավ: Դռան շեմին որ մոտըցան, զդարվեշ դմշկեց ինե, սաթրին ընկյալ, վիզ կտրեց: Դավրեշի ջանտակ վերուց, դրեց ի բերդ, գլխս դրեց ի բատան: Տղեն մտավ ի մեջ բատնին. զուր ծին թորկեց, մեկ թաժա ծիմ՝ վերուց. ճյաքեր լե փոխեց ու էլավ զուր ծին խեժավ, ընկյալ ճամբախ: Գնաց, ճամբխու կեսն ընցավ, խազալ մի փախավ առջևեն. լարեց, գնաց մտավ տիրու տուն: Տղեն գնաց տիրոջ դուռ իջավ:

- Ձիմ խազալ բերեք, տվեք:

Տան տերն էլավ դուս, ասաց. - Ձի խազալ չկա. ծի աղջիկ մի կա, արի տամ քե:

Բերեց գաղջիկ էտուր տղին: Մեկ շաբաթ մի մնաց. ավուր մեկ կնիկ էլավ, ջուր էլից, տղեն լվացվավ, մեկ էլ իշկեց օր ծուխ մի կերևի. ասաց. - Կնիկ, էսդ ի՞նչ ծուխ ա կերևի:

Կնիկն ասաց. - Մարդ Աստղծուն, ի՞նչ լախ ունիս ծխեն. զէն ծուխ հաճող ջատի պառավմ՝ ա. մարդու զիան կենա:

- Չէլի. - ասաց, - ես պտի էրթամ զէն ծուխ տեսնիմ:

Էլավ գնաց դըխ ծուխ: ջատու պառավն էկավ առեջ. - Վուի՛ թագյնվորի տղա՛, գլխուդ, արևուդ մեռնիմ, ծի տղա չկա, արի, էլի ծի տղա:

Էդա ջատու պառավ լե, զուր բաղջի մեջ, քոջ խոր մի փորեր էր, մեծ ծաղիկ մի դրեր էր ի բերան. գյնլացողին կը խաբեր, կը մոտըցներ խորուն, կը դմշկեր իցած:

Տղեն մեկ շաբաթ մի մնաց պառվու մոտ: Շաբթե մի սորա պառավն ասաց. - Տղա՛, որդիս, էրթանք իմ բաղջի մեջ զտղեն չիչըկներ խոնդնտա:

Մեկ խել մի մըջ բաղջին զտղեն պտուտցուց, սորա տարավ քոջ ծաղկի մոտ. տղեն խըտ կզելուն դմշկեց, ընկյալ խոր:

Մնաց պատիկ աղբեր:

էդա պատիկ աղբերն էր, էլավ ասաց ուր խոր. - Ափո՛, ես պտի էրթամ դըխ իմ աղբեր:

էլավ էկավ ճամբխու կես, ծարվըցավ. ծուխ մի երևաց. ասաց. - Էն տեղեն ծուխ գէլի, խայ շենլիկ ա, էրթամ մեկ ջուր մի խմեմ:

Գնաց ջուր խմելու, կնիկ գիտցավ թե էն ջոջ աղբերն էր, ընչի օր էրկուս մեկ խնծորից են. ըսկի իրարուց չըն ջոկնվե, խարցուց. - Գլխուդ, արևուդ մեռնիմ թագյանվորի տղա. դու ի՞մալ պրծար էն զալըմ դավոնշից:

Ասաց. - Աստված պրծուց:

Տղեն խըտ գյանխուն իմցավ, օր ուր՝ աղբեր էդա ճամբխովն ա գյանցեր: Առավ աղբոր ճամբախն ու գնաց. գնաց մեկ սարի մի ըռաստ էկյավ. մտավ ինե, իշկեց որ աղբոր ձին դա. իշկեց որ թա աղբոր ճյանքերն էլ դա: Ինք լե էլավ զուր ճյաք ու ձին թորկեց էդա տեղ. թաժա ձեռմ՝ էլ ճյաք խազավ, աղբոր ճամբախ տուր ուր առեջ:

Գնաց, շատ ու քիչ Աստված գիտա, մեկ լե իշկեց օր խազալ մի առեջեն փախավ. լարեց գխազալ, տարավ ասըսցուց տուն մի. ինք լե իջավ դուռ, ասաց. - Զիմ խազալ բերեք, թե ձեր տուն կագուլեն:

Տան տեր էլավ դուս. գիտցավ թե էդա ջոջ աղբերն էր, ասաց. - Տղա, ի՞նչ կուգես. խազալ ժըխտ իմ աղջիկն ա. էղե քե կնիկ:

Տղեն էլ ձին չտվավ, մըջ ուր մտաց ասաց. «Օր հըմալ ա, իմ աղբար սլամաթ ա»:

էկավ, իջավ ի տուն. բերին իրիկուն յանթաղ եցկին. տղեն թուր քյանշեց, դրեց մըջ ինք ու մըջ աղբրկին:

Լուսմթի տղեն էլավ դուս. աղջիկ ջուր տարավ օր լվացվի. իշկեց օր ծորու մը միջեն ծուխ մը գէլի, հարցուց. - Աղջի, էն ի՞նչ ծուխ ա կէրկի:

- Չէ՞ դու, - ասաց, - էս էրկու շաբաթ գյացեր իր էնա տեղ, Աստված քե ջորով պրծուց:

Տղեն ասաց մըջ ուր մտաց. «Կա ու չկա. էն ծուխ խանողն զիմ աղբեր սպանե»: Քշեց, գնաց, տեսավ օր քատու պառավմ՝ էկավ առեջ:

- Գլխուդ, արևուդ մեռնիմ, թագյանվորի տղա, ես քե կպտոտենք, անճախ քեփլար հիս, արի, էղի ձի տղա:

Տղեն իջավ, գնաց, մեկ շաբաթ մը ընցավ, պառավն ասաց. - Տղա՛, որդիս, էլի էրթանք. տե՛ս, իմ բաղչի մեջ ինչ անմախտտենի ծաղիկ կյա, խոնդնտա:

էլան գյանցին ի բաղչեն, պառավ բերեց զտղեն խորու մոտ, ասաց. - Որդիս, գնա գէն ջոջ ծաղիկ էլ խոնդնդա:

Տղեն խեւացի էր, ասաց. - Դու գնա խոնդնդա, օր ես լե սովրիմ, նոր գյամ:

Պառաւմն օր կգաւ, խոնդնդաց, տղեն ծեռ թալեց զպառավու ծամեր ժողվեց:

- Ա՛, հա՛ն. իմ աղբեր, - ասաց:

- Յամա՛ն, - ասաց պառաւ, - թող օր գըու աղբերն խաննմ:

Բերեց չկան կապեց. պառաւ իջուց ի խոր. խանեց զաղբեր, խանեց տըսվերկուս լե ուրիշ թագյաճորի ավլատ, զէնոնց ազատ էրաց, գյացին. ինք բերեց էրկու բարտի ծառ, պառավու մեկ ոտ կապեց ծառ մի, խըտ-թոր-կելուն, պառաւ օտներուց ճըղաւ, գլխուց էլաւ դուս: Նոր էլաւ առաւ զուր աղբեր, գնաց, ուր աղբոր աներոջ տուն իջաւ: Աներոջ տուն չճանչ-ցան ուրանց փեսեն ո՛ր մեկն էր:

Իրիկուն օր էղաւ, ջոջ աղբեր գնաց, մըտ աղջիկ պարկաւ. նոր ճանչցան ուրանց փեսեն ո՛ր մեկն էր:

Բարի լուս բացվաւ վըր ծգի, բերին գմեն մեկել աղջիկ լե տվին պստիկ աղբոր:

Էլան առան զուրանց կընկտիք ու ընկան ճամբախ:

Շատ ու քիչ գյացին Աստված գիտա. էկան տեղ մի, մութ էտուր. չատրներ զարկին, առան զուրանց կնկտիք, մտան ի մե:

Լուս բացվաւ. բացվի վըր խազըներուն, ջոջ աղբեր էլաւ տեսաւ օր մեծ վիշապ մի ուր չատրի չորս թարաֆ փաթե, ու գլոխ դրե վըր պոչին: Էլան էրկու աղբեր խոսքեր արին մեկ, օր զանին վիշապուն, սպանին: Վիշապ խժալին ասաց. - Է՛յ խողածին, ըսկի իրար մի գյաք, ես ծի բան չեմ աներ. թե իմ խոսք կատարեք:

Պստիկ աղբոր ասաց. - Դու էլի առ գըր կնիկ, գնա՛:

Ջոջ աղբոր լե ասաց. - Դու լե գէլիս, կերթաս Սինամ թագյաճորի քյա-ղաք, կը հարցուս, կը փնտռես, կիմանաս թե. «Գյու Սինամա նա՛ էտթի, Սինամ Գյուլա նա՛ էտթի»*. զէտա էրկու խոսաց պատասխանեն կը բերես ծի, նոր արե, առ քյի կնիկ: Աստված քյի բան հաջողա:

Պստիկ աղբերն էր, առաւ զուր կնիկ, գնաց մեկ դէխով. ջոջ աղբոր կնիկ մնաց մըջ չատրին, վիշապի ումուտին, ինք դեմ էրեց ու գնաց դեպ Սինամ թագյաճորի քյաղաք:

Շատ ու քիչ գնաց, Աստված գիտա. գնաց մեկ ծովու մ՛ ըռաստ էկաւ. իշկեց օր ծառ մի կեր զատ, գնաց ծառի տակ պարկյաւ: Մեկ էլ զաչվին բացեց որ ճըվճըվուն մի կիւզայ, թռաւ էլաւ վեր, իշկեց որ օժ մ՛ էկեր ա, օր զարծվի ծագերն ուտա: Էլաւ զօժ բրդեց, լցեց զուր մարթալ ու դրեց ծագերու առեջ. պարկյաւ, քնաւ:

• Գյուլ Սինամին ի՞նչ ըրաւ, կամ Սինամ Գյուլին ի՞նչ ըրաւ (թուրք., ծ.ա.):

Արծիվ վերևուց կուգյա՞ր, էկավ իշկեց օր մեկ իմսամ օղլի մի պարկե ծառի տակ: մոտըցավ որ զխողածին վերցեր, ծագեր էլան առեք:

- Յամա՞ն, - ասացին, - վերև Աստված, ներքև էսա խողածին ա մեզի պրծուցե:

Արծիվ գթեր բացեց, խով էրաց վըր տղին, տղեն խել մի քնավ, էլավ:

Արծիվն ասաց. - խողածին, ուզա՛ օր տամ:

- Քենե կուգեմ, - ասաց տղեն, - որ զիս տանիս Սինամ թագյանվորի քյաղաք:

- Չեյվա՞խ, - ասաց արծիվ, - էսա իմ խալիվոր վախտին, ծի շատ չաթին ու դժար տեղ կապեցիր, տղա՛, լե քո աղեկուտեն չըմ մոռնա, քու խոսք պտի էնեմ: Գնա՛, առ քյանսուն տիկ գինի, քյանսուն լե դմակ, բեր դիր վըր իմ շալկին, ու էլի նստի վրեն. «ղա՛» կենիմ՝ դմակ թալա, «ղո՛ւ» կենիմ՝ գինի թալա. քե աչք բանալ խփուցելուն կիսաըցում քի մուրագին:

Տղեն էր, գնաց զամեն թատարուք տեսավ, էլավ նստավ վըր արծվու թևերուն. արծիվ առավ զտղեն, դեմ իջուց Սինամ թագյանվորի քյաղաք:

- Դարե, խողածին, - ասաց, - հիսնե մեկ բրբուք քաշա, որ նեղած ընկյա՞ր, տուր կրակ, օր ես քե խասնիմ:

Արծիվ թռավ դեմ ուր ծագեր, տղեն զբրբուք վերուց. գնաց, Սինամ թագյանվորին եղավ սեյիս:

Սինամ թագյանվոր շատ խազ էրաց էղա տղի մոտեն: Տղեն օրմ՝ ասաց. - Թագյանվոր ապրած. դու հիսնե էս խըտըր խազ կենես. քինե ըռհա կենեմ, քո զլոխ էկած բաներ ծի հատնես:

- Ա՛յ մարդ, - կասա, - հիսնե վազն արի, օր զիմ խըսեն էրի, պրծա. քի վիզ կզանիմ, եռսուն և իմ սպաներ եմ, քեզ էլ կը սպանեմ. կեղի քյանսուն:

- Չա՛, - ասաց տղեն, - դուն ասա, իմ վիզ էլման զար, խընց զենոնք մախուլ չիմ:

Սինամ թագաւորն ասաց. - Օրերուց օր մի. մեկ դավրեշմ՝ էկավ, կանանչ վարոց էտուր ծի. ասաց. «Ջար էտա բոճուն, կեղի կատու»: Ջարկեցի բոճուն, եղավ կատու: Իմ կնիկ լե շատ քինկյանա էր. ես լե գեղ վարոցով զարկի կնկյան, եղավ շուն, ընկյանվ աշչու խանութներ, շատ զարար տվեց, տեսա օր չեղի, վարոցով զարկի. եղավ մեկ ջորիմ: Շատ հեծա, շատ չարչրեցի. դժար էկավ ծի, վարոց զարկի, էլման եղավ կնիկ: Սորա էղա անամոթ կնիկ, էլավ զիմ վարոց գյողցավ, զարկեց ծի. էղա կատու, ընկյա տոխսներ. էլ իմ ոյիւշման չտեսի: Մարդու մի մեկ զիս տեսավ. ասաց. «Վըր իմ արևուն գյա չյասիս էղա Սինամ թագյանվորն ա»: Էրկու տարի զիս թորկեց կատու. էրկու տարուց սորա էրաց զիս ջորիմ՝, խեծավ: Ջորուց

պրծավ, երաց զիս քյանլա շուն մի, եցկեց մըջ սօխսներուն. երկու տարի լե սոխսներ պտոտեցի: Էդոր էտև՝ իմ կնկան՝ Գյիւլ Սինամին մեկ ջառե մի կեր. ըտոր շատ դժար կյիւզյան ծի. զվարոց գյիղցավ, բերավ, զանեց ծի, էղա էլման առաջվա մարդ: Նոր էլա վարոցով թաժա զարկի զիմ կնկան, էրեցի շուն. սոխըխներ պտոտավ. հարի զարկեցին, սպանին:

- Դե, - ասաց, - արի գըյո վիզ զանիմ:

- Կյանի, - ասաց տղեն, - էրթամ պոզիմ, գյան, զիմ վիզ զար:

Տղեն էլավ դուս, արծըվու բրբուք էտուր կրակ. արծիվ յոթ սարի էտև իմցավ, խանքակտուր խասավ, զտղեն վերուց, բերեց դրեց էլման ծովու ասի:

- Դը, գնա՛, - ասաց, - Աստված քյի բան հաջողա:

Տղեն էլավ, էկավ մըտ վիշապ, ասաց. - Գյիւլ Սինամ խուրպան էրեցի քե, շուտունց ա մեռեր:

Դու մի ասի, էղա վիշապ լե Գյիւլ Սինամի քուրն էր. բաքլու կեներ օր Գյիւլ Սինամ մեռներ, էրթեր՝ առներ զՍինամ թագյանվոր: Էղա ջուապի վըրեն ուրըխցավ, էլավ զտղի կնիկ թասլիմ էրեց ուրին ու ինք գնաց մըտ Սինամ թագյանվոր:

Տղեն էր, առավ զուր կնիկ. գնաց ուր խոր քյաղաք, մոր բերին, պակեցին. զխարսնիսն էրին, էնոնք խասան ուրանց սրտի մուրազին. դուք լե խասնիք ձեր մուրազին:

